



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

*«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի
օգնականների դասավանդման հմտությունների զարգացման
սպահովվում» ծրագիր*

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «ՀՀ Տավուշի մարզի Բերդավանի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ
Առարկա՝ ԹԳՀԳ

Թեմա՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը
դասապրոցեսում՝ որպես սովորողի մոտիվացիան
բարձրացնելու միջոց:

Մենթոր՝ Մարինե Ղարազյոզյան

Ուսուցիչ՝ Անահիտ Բարխուդարյան

ԲՈՎԱԴԱԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	2
Դասավանդման որակի բարձրացման արդյունավետ միջոց	3
Նոր չափորոշիչների կիրառումը Տավուշի մարզում	4
Հետազոտության արդիականությունը	6
Մոտիվացիոն ուսուցման գաղափարական հիմքերը	9
Մոտիվացիայի տեսակները	10
ԿԱՊԿՈՒ երեխաներ	11
Վերլուծություն	14
Եզրակացություն	21
Օգտագործված գրականություն և հղումներ	23

«Մեր բարոյական պարտականությունն է յուրաքանչյուր երեխայի հնարավոր լավագույն կրթություն տալը»

Դեամոնդ Թուրու

Ներածություն

Կրթության ոլորտը դիտարկվում է որպես երկրի կայուն զարգացման, նաև մարդկային ռեսուրսի պահպանման ու վերարտադրման նախապայմաններից: Կրթության ոլորտը ամենաբարդերից է, որն անընդհատ կատարելագործվելու կարիք ունի: Այժմ շատ կարևորվում և խրախուսվում է հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառությունը ուսումնական գործընթացում: ՏՀՏ-ի գործածությամբ հնարավոր է ավելի հարուստ, բազմերանգ ու դինամիկ ուսումնական նյութ ստեղծել և օգտագործել, դրա միջոցով նաև կարող ենք ուսումնական բովանդակությունը դարձնել ինտերակտիվ: Արդյունքում, աշակերտը ոչ թե տեղեկատվության պասիվ ստացողն է, այլ հենց ինքն էլ կարող է փոփոխել ու նույնիսկ ստեղծել ուսումնական բովանդակությունը: Սա երեխայի մոտ զարգացնում է պատասխանատվության զգացում. դասարանում, շրջապատում կա մի բան, որ կախված է իրենից: Հայտնի է, որ մարդկանց մեծամասնությունը մտապահում է լսածի 5%-ը և տեսածի 20%-ը: Ձայնային և տեսողական տեղեկատվության միաժամանակյա օգտագործումը բարձրացնում է մտապահելու ունակությունը մինչև 40-50%:

Տեխնոլոգիաները մեզ հնարավորություն են տալիս ուսումնական նյութը ներկայացնել զանազան ձևերով, և հենց դրանով է ուսումնական պրոցեսն ավելի արդյունավետ դառնում: Ուսուցիչներն այս դեպքում խնայում են ոչ միայն ժամանակ, այլև հիմնարար, խորացված գիտելիք են տալիս աշակերտին, որը կպահպանվի հիշողության մեջ: ՏՀՏ - ի ընձեռած հնարավորությունները մոտիվացիա է ստեղծում աշակերտի մոտ :

Ընտրել եմ այս թեման՝ կարևորելով մոտիվացիայի դերը մարդկանց կյանքում:

Մոտիվացիան ամենուր է այն աշխատանքի նկատմամբ հետաքրքրությունն ու ցանկությունն է, որի վրա ազդում են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոնները:

Ժամանակակից տեխնոլոգիաների զարգացումը ևս մեկ տարբերակ է անհատների մի մեծ քանակի մոտիվացված պահելու: Հետազոտական աշխատանքի նպատակն է զարգացնել մոտիվացիոն ուսուցման շարունակականությունը դասապրոցեսին:

Կրթության որակի ապահովումը հանրակրթության բարեփոխումների գերակա խնդիրն է: Այն, հանդիսանալով բազմակողմ և բազմամակարդակ, ներառում է տարբեր մոտեցումներ ու ռազմավարություններ, որոնց շարքում կարևորագույններից մեկը ուսումնական գործընթացում ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) կիրառումն է:

1. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ

ՏՀՏ-ները ներկայումս ընդգրկվել են մարդկանց գործունեության բոլոր ոլորտներում, որոնցից զերծ չէ նաև կրթության ոլորտը, մասնավորապես դպրոցը: ՏՀՏ-ի ինտեգրումը դասապրոցեսին բարձրացնում է ուսումնական պրոցեսի արդյունավետությունը: ՏՀՏ-ները ուսուցման պրոցեսը դարձնում են ավելի հետաքրքիր, բովանդակալից՝ ներկայացնելով անհրաժեշտ ինֆորմացիան անհրաժեշտ ժամանակին: ՏՀՏ-ն անհրաժեշտ է ժամանակակից դասին, որի համար ակտիվ օգնական և մասնակից կարող է լինել աշակերտը: Յուրաքանչյուր աշակերտ յուրացնում է նոր գիտելիքները տարբեր ձևերով: Նախկինում մանկավարժների համար դժվար էր գտնել անհատական մոտեցում ամեն աշակերտի համար: Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է դիտողականության բարձրացմանը, թույլ է տալիս ուսուցչից աշակերտին գիտելիքների հաղորդման ժամանակ նշանակալից ձևով մեծացնել ուշադրությունը, հիշողությունը: Այժմ դպրոցները ՏՀՏ գործիքների կիրառմամբ ստացել են հնարավորություն՝ մատուցելու նոր ինֆորմացիան այնպես, որ բավարարեն յուրաքանչյուր աշակերտի անհատական հետաքրքրությունները և պահանջները: ՏՀՏ-ի կիրառմամբ աշակերտների կողմից կատարված հետաքրքիր և հետազոտական աշխատանքները թույլ են տալիս ակտիվորեն ներգրավել նրանց դասապրոցեսի կազմակերպման մեջ: Այսպիսով, ՏՀՏ-ների ինտեգրումը ուսումնական գործընթացին անխուսափելի է, և դրական ազդեցությունն ակնհայտ է: Սակայն հարց է առաջանում, թե որքան արդյունավետ են դրանք օգտագործվում

ուսուցման պրոցեսում: Իմ կարծիքով ՏՀՏ-ների կիրառմանը դպրոցում կնպաստեն նաև հաճախակի կազմակերպվող միջդասարանական, միջդպրոցական և միջհամայնքային մրցույթները և հեռավար ուսուցման դասերը, որոնք կմեծացնեն աշակերտների և ուսուցիչների հետաքրքրություններն ու ցանկությունները դրանց կիրառման ուղղությամբ: աշակերտների համար ապահովել պայմաններ նրա ընդունակությունների, հետաքրքրությունների, հակումների, ճանաչողական պահանջմունքների, բավարարման ու մաքսիմալ զարգացման համար :

2. Հանրակրթության նոր չափորոշիչի կիրառումը Տավուշի մարզի դպրոցներում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հանրային քննարկման էր ներկայացրել հանրակրթական ուսումնական հաստատություններում նոր չափորոշիչը ներդնելու նպատակով: Փորձարարական դասարաններ են համարվում 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարանները: Տավուշի մարզում փորձարկվելուց հետո առարկայական ծրագրերը լրամշակվել են և առարկայական նոր չափորոշիչները և ծրագրերը կներդրվեն 2023թ. ՀՀ բոլոր դպրոցներում:


Մեր կրթության բարեփոխումները շատ ճիշտ ժամանակին էին, որովհետև հին ծրագրերով այսօրվա սերնդի պահանջները մենք չէինք կարողանում բավարարել և մոտիվացնել արդի հասարակությունում ներգրավվելու գործընթացին: Նոր ծրագրերի կիրառման սկզբնական փուլում հանդիպեցինք որոշ դժվարությունների, բայց մեր մենթորների բանիմացությամբ, հոգատար, համբերատար և բարեհամբուր վերաբերմունքի շնորհիվ շատ արագ կարողացանք հաղթահարել դժվարությունները: ԹԳՀԳ ուսուցիչներով փոխադարձ կապի օղակները ընդլայնեցինք և անհրաժեշտ նյութերով իրար օգնեցինք: Արդյունքում կարողացանք հասնել նոր չափորոշիչների տրված պահանջների, որոշած վերջնարդյունքների կատարմանը և ԹԳՀԳ առարկայի նոր ծրագրերի յուրացմանը: Նոր ՉՊՀ-ի կիրառման գործընթացում շատ կարևոր է նաև նոր մեթոդների կիրառումը:

Կրթական նոր չափորոշիչների հիմնական կարևորագույն առանձնահատկությունը


կարողունակությունների (կոմպետենցիաների) զարգացմանը միտված առարկայական ուսուցումը և ուսումնառությունն է:

Կարողունակությունները գիտելիքի, հմտությունների, ընկալումների, արժեքների, վերաբերմունքի բարդ համակցություն են:


- Դրանք հնարավորություն են տալիս մարդուն որոշակի ոլորտում արդյունավետ գործունեություն իրականացնել:
- Դրանք աշխատանքում, կյանքում և քաղաքացիական հասարակությունում ձեռքբերումներ ունենալու գրավականն են:
- Կոմպետենցիաների ձեռքբերումը և զարգացումը շարունակական գործընթաց է:
- Յուրաքանչյուր առարկա պետք է ունենա իր ներդրումը դրանց ձեռքբերման և զարգացման գործում:



ՀՊԶ-ով սահմանված միջնակարգ կրթության ութ առանցքային կարողունակությունները



Բլումի վերանայված տաքսոնոմիա



3. Հետազոտության արդիականությունը

Հետազոտության արդիականությունը դա էական նշանակություն ունի ուսման գործընթացում: Հետազոտության այս թեման պատահականորեն չեմ ընտրել: Ընտրել եմ այնպիսի թեմա, որն, առնվազն, իմ աշխատանքային գործունեության ընթացքում դարձել է հիմնախնդիր և ուզում եմ ներկայացնել նաև տարրական, հիմնական և ավագ դասարաններում դրա կիրառման սեփական փորձ, առաջարկել լուծման ուղիներ, խաղային հնարներ: Կարծում եմ, որ այն արդիական է բոլորիս համար: Աշխատանքային փորձս ցույց է տվել, որ տարրական դասարաններում ուսուցանվող առարկաների ուսումնասիրման ընթացքում գրեթե բոլոր սովորողների մոտ էլ առաջանում են դժվարություններ, քանի որ հարկավոր է լինում մտապահել կարճ ժամանակահատվածում տրվող մեծ քանակությամբ տեղեկատվություն:

Հետազոտության նպատակը

Ցույց տալ, որ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը դասապրոցեսում բարձրացնում է սովորողների մոտիվացիան և դրանց կիրառումը ուսումնառության գործընթացը դարձնում է հետաքրքիր, համագործակցային, չհոգնեցնող, ինչպես նաև՝ արագ ու արդյունավետ:

Վերոգրյալի համաձայն սահմանվում են հետազոտության հետևյալ խնդիրները.

- գտնել, ուսումնասիրել այս թեմայի շուրջ եղած գիտական գրականությունը, էլեկտրոնային ռեսուրսներն ու առցանց խաղերը,
- ընտրել, մշակել, համակարգել դասարաններում կիրառելի S2S ռեսուրսները և փորձառությամբ հիմնավորել դրանց արդյունավետությունը:

Առաջարկված խնդիրների լուծման նպատակով օգտագործվել են հետազոտման հետևյալ մեթոդները.

- համացանցի ու գիտամեթոդական գրականության ուսումնասիրում և տեսական ու գործնական վերլուծություն,
- դասալսումների միջոցով տարրական դասարանների ուսուցիչների աշխատանքի փորձի ուսումնասիրում և վերլուծում,
- մանկավարժական հետազոտման մեթոդներ՝ դիտում, հարցում,

- էլեկտրոնային թեստեր, քարտեր, տնային հանձնարարություններ, ինքնուրույն և խմբային աշխատանքներ,
- դիդակտիկ խաղեր:

Ժամանակակից կրթության հիմնական մարտահրավերներից մեկը աշակերտներին մոտիվացված պահելն է: Սովորելը հաճախ հաջողվում է, եթե մոտիվացիա կա, բայց յուրաքանչյուր սովորող մոտիվացվում է տարբեր ձևերով և պատճառներով: Ահա թե ինչու պետք է հասկանանք սովորողի նախասիրությունները և հետաքրքրությունները նախքան մոտիվացիոն ուսուցման միջավայր ստեղծելը:

Ժամանակակից երեխան ապրում է էլեկտրոնային մշակույթի դարում: Դպրոցում անհնար է դասավանդել առանց հասանելի և մատչելի տեսանյութերի: Առաջանում են մի շարք խնդիրներ. որտեղ գտնել և ինչպես ներկայացնել նյութը:

Այստեղ օգնության է գալիս համակարգիչը՝ համացանցը: Ավանդական «ուսուցիչ-աշակերտ-դասագիրք» սխեմային ավելանում է մի նոր օղակ՝ համակարգչային ուսուցում: Հետևաբար ուսուցիչը պետք է տիրապետի ժամանակակից կրթական հմտություններին, այսինքն՝ լինի մեդիագրագետ:

Տարրական, հիմնական և ավագ դպրոցի երեխային տրված արդյունքներից մեկը պիտի լինի նաև ժամանակակից համակարգչային տեխնոլոգիայի իմացությունն ու հմտությունը, կիրառելու այն ինքնակրթության համար և ամենակարևոր մոտիվացիայի համար:

Սովորելու ընթացքում աշակերտը դրսևորում է այնպիսի որակներ, ինչպիսիք են՝ մտածողության ինքնատիպությունը, խնդիրը տեսնելու ունակությունը, նոր պայմաններում կողմնորոշվելու արագությունը: Վերոնշյալ իրավիճակներում ստանդարտ լուծումներ գտնելու համար անհրաժեշտ է պահպանել մոտիվացիայի շարունակականությունը: Հետևաբար, մեզ անհրաժեշտ են ավելի հետաքրքիր մեթոդներ, միջոցներ, մոտեցումներ, ի վերջո այն ամենը, ինչը կօգնի աշակերտներին մոտիվացված պահել, որն էլ կնպաստի ավելի խորը գիտելիքներ ստանալ աշխարհի մասին, արդյունքն էլ կլինի գրագետ, զարգացած երիտասարդություն: Առաջարկված նպատակն ուսումնասիրելիս ի հայտ են եկել հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել մոտիվացիոն ուսուցման տեսակները,
- Այնպես անել, որ աշակերտի մոտ մոտիվացիան աճի և ոչ թե նվազի,

- Սովորել չցանկացող աշակերտին մոտիվացնելով ներգրավել դասապրոցեսին:

4. Մոտիվացիոն ուսուցման գաղափարական հիմքերը

1. Մոտիվացիան այն է, ինչը մեզ ստիպում է սկսել, սովորությունն այն է, ինչը մեզ ստիպում է առաջ գնալ:

Ջիմ Ռոն

2. Մոտիվացիան մարդկանց ստիպելու արվեստն է, որպեսզի անեն այն, ինչ մենք ենք ուզում, որովհետև նրանք ցանկանում են դասանել:

Դուայթ Դեյվիդեյզենհաուեր

3. Մոտիվացիայի ողջ գաղափարը ծուղակ է: Պարզապես արեք դա... և հետո, գուշակեք, թե ինչ: Այն բանից հետո, երբ մենք սկսում ենք ան լ այն, մոտիվացիան պարզապես գալիս է և մեզ համար հեշտացնում է դա անելը:

Ջոն ՔՄաքսվել

4. Սովորողին կարելի է դրդել վախով և պարզենքով, բայց այս երկու մեթոդները միայն ժամանակավոր են: Միակ մնայուն մեթոդը ինքնամոտիվացիան է:

Հոմեր Ռայս

5. Մենք կարող ենք փոփոխել գործունեության տեսակը և կարող ենք նաև փոփոխել դինամիկան, որում տեղի է ունենում այդ գործունեությունը: Դինամիկա ասելով ես նկատի ունեմ, որ երբեմն մարդիկ կարող են աշխատել միայնակ, ինչպես նաև զույգերով կամ խմբերով:

Ադամ Սիմփսոն

6. Ուսուցումն ու սովորելը քայլ առ քայլ լաստիճանական գործընթաց է, և շատ հաճախ դժվար է տեսնել առաջընթացը:

Անթոնի Գաուզան

ԹԳՀԳ առարկայի ուսուցիչների դերը շար կարևոր է առարկայի նկատմամբ սովորողների հետաքրքրությունների շրջանակը մեծացնելու գործընթացում: Ուսուցիչը պետք կարողանա դասապրոցեսին ճիշտ և տեղին տեխնոլոգիական գործիքներ օգտագործի, որպիսի սովորողի մոտիվացիան աճի դասապրոցեսի նկատմամբ, փոխադաւձ կապ հաստատելով նաև այլ առարկաների հետ:

Մոտիվացիան պետք է լինի անհատի ուղեկիցը և այն պետք է ուշադիր պահպանվի

գործընթացի ընթացքում: Ուսուցիչները պետք է փորձեն զարգացնել ներքին մոտիվացիան, քանի որ այն կարող է ավելի արդյունավետ լինել սովորելու համար: Նրանք պետք է մտածեն, թե ինչպես են իրենց սեփական ընտրությունները ու գործողությունները դասարանում ազդում սովորողների մոտիվացիայի վրա: Այդ առումով նրանք պետք է թույլ սովորող աշակերտի մոտ մոտիվացիա առաջացնեն, իսկ սովորող և հետաքրքրասեր աշակերտի մոտ՝ պահպանեն մոտիվացիայի պրոցեսը, որ այն չկորչի: Ուսուցիչը միշտ պետք է նպատակ ունենա տալ սովորողներին այն, ինչ նրանք իրականում ցանկանում են, կամ գոնե դրա կարիքն ունեն: Խնդիրն այն է, որ կարողանանք օգտագործել այդ ցանկությունը՝ օգնելու սովորողներին շարունակել ուսումնասիրել՝ սովորելու նպատակով:

5. Մոտիվացիայի տեսակները

Ներքին և արտաքին մոտիվացիայի բացահայտում:

Ներքին մոտիվացիան սովորելու մոտիվացիա է, որը բխում է այնպիսի ներքին ուժից, ինչպիսին է հետաքրքրությունը ուսուցման նկատմամբ կամ ընդհանրապես անձնական հետազոտ զարգացման ցանկությունը: Այն համեմատվում է արտաքին մոտիվացիայի հետ, որը դրսևորվող ճնշումների դրդապատճառն է: Հաճախ բարձր մակարդակի սովորողները ցուցաբերում են ներքին մոտիվացիայի ուժեղ աստիճան, քանի որ նրանք շարունակում են ուսումնասիրել ցանկացած գործնական կարիքից դուրս: Երբեմն սովորողները միանում են դասին արտաքին մոտիվացիայի պատճառով և ներքուստ մոտիվացվում են, քանի որ ուսուցումը դառնում է հաճելի և պարզևատրոդ: Սովորողներից, ուսուցման և ուսուցման գործընթացի վերաբերյալ պարզ հարցաթերթիկների միջոցով հետադարձ կապ ստանալը կարող է օգնել ուսուցչին պարզել, թե որն է սովորողների համար առավել օգտակար և հաճելի: Յուրաքանչյուր ոք կարող է զարգացնել սովորելու մոտիվացիա, բայց ոմանք կարող են ավելի շատ աջակցության կարիք ունենալ, քան մյուսները՝ սեփական մոտիվացիան օգտագործելու համար: Դա անելու եղանակներից մեկն է՝ օգնել սովորողներին ուսուցման համար սահմանել նպատակներ: Շատ ավելի հեշտ է մոտիվացված մնալ, եթե տեսնում ես, թե որոնք են քո նպատակները, ինչի համար էլ պետք է օգնել սովորողներին սահմանել նպատակներ, որոնց նրանք կարող են հասնել, և այնուհետև նշել, երբ նրանք հասան իրենց նպատակներին:

6. ԿԱՊԿՈՒ ԵՐԵՒԱՆԵՐ

Մենք դասարանում ունենք ԿԱՊԿՈՒ երեխաներ, ովքեր ունեն ինտելեկտուալ ֆունկցիաների միջին ու ծանր խանգարումներ, և նրանց հետ աշխատանքը կատարվում է անհատական ուսուցման պլանով: Կարծում եմ, որ նման դասարանում ավանդական մեթոդով ուսուցումը այդքան էլ արդյունավետ չէ: Ուստի անհրաժեշտություն է համարում հետազոտություն իրականացնել տարբերակված ուսուցմամբ՝ միաժամանակ ներգրավելով բոլոր սովորողներին, կիրառելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ: Հետազոտական աշխատանքներին մասնակցելով ԿԱՊԿՈՒ երեխաները ինտեգրվում են դասապրոցեսին, ստեղծվում է ջերմ հարաբերություններ դասընկերների հետ և սովորողների մեջ զարգանում է փոխօգնության, փոխզիջման և հանդուրժողականություն կարևոր բնավորություն: Այս հետազոտության գլխավոր նպատակն է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջոցով բարձրացնել ուսուցման որակը՝ միաժամանակ լուծելով մոտիվացիայի հարցը:

Մեր օրերում ամենաարժեքավոր ռեսուրսը տեղեկատվությունն է, իսկ ամենաանփոխարինելին՝ ժամանակը, որը ժամանակակից մարդուն խիստ պակասում է: Իհարկե, կյանքի բարձր տեմպը, ժամանակի արագացված զարկերակը հսկայական ազդեցություն ունեն մատաղ սերնդի դաստիարակության և կրթության վրա: Կրթության արդյունավետությունը միշտ էլ կախված է եղել ուսուցիչների պատրաստվածության աստիճանից: Այսօր էլ ուսուցիչը նախկինի պես մնում է ուսուցման բարդ պրոցեսի անհրաժեշտ միջնորդը նոր գիտելիքների և աշակերտների միջև, սակայն ՏՀՏ-ի և կրթության ինտեգրումը նպաստում են ուսուցչի նոր դերի ձևավորմանը: Ուսուցիչը ՏՀՏ-ի միջավայրում հանդիսանում է ոչ միայն ինֆորմացիայի և գիտելիքների, փաստերի, այլև սովորողներին օգնում է հասկանալու ուսուցման գործընթացը: Օգնում է աշակերտներին փնտրել նոր ինֆորմացիա, պարզաբանել, թե գտածը արդյոք համապատասխանում է տրված պահանջներին, ինչպես նաև հասկանալու, թե այդ ինֆորմացիան ինչպես օգտագործել իրենց առջև դրված հարցերի և բարդ խնդիրների լուծման դեպքում: Մեղիա ներկայացման /պրեզենտացիա/ կառուցվածքային դասավորությունը զարգացնում է համակարգված, վերլուծական մտածողությունը: Բացի դրանից, պրեզենտացիայի օգնությամբ կարելի է օգտագործել ճանաչողական գործունեության կազմակերպման

զանազան ձևեր՝ ֆրոնտալ, խմբային և անհատական: Մուլտիմեդիա շնորհանդեսը, այդպիսով, ավելի օպտիմալ և արդյունավետ է համապատասխանում դասի երեք միասնական դիդակտիկ նպատակներին .

- ✚ կրթական առումով՝ սովորողների կողմից ուսումնական նյութի ընկալումը, ուսումնասիրության օբյեկտների կապերի և հարաբերությունների ըմբռնումը
- ✚ զարգացման առումով՝ սովորողների ճանաչողական հետաքրքրությունների զարգացումը, ընդհանրացնելու, վերլուծելու, համեմատելու հմտությունները, սովորողների ստեղծագործական գործունեության ինտենսիվացումը
- ✚ դաստիարակչական առումով՝ գիտական աշխարհայացքի ձևավորում, ինքնուրույն և խմբային աշխատանքների հստակ կազմակերպման հմտություններ, ընկերության, փոխադարձ օգնության զգացումների դաստիարակում :

Դպրոցի ինֆորմատիզացիան կարևոր դերակատարություն ունի կրթության ժամանակակից որակի և 21-րդ դարի երեխայի տեղեկատվական մշակույթի ձևավորման համար: Այստեղից էլ բխում են SՆՏ-ների օգտագործման նպատակները.

- բարձրացնել սովորելու մոտիվացիան /շարժառիթը/
- մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը
- նպաստել սովորողների ճանաչողական կարողությունների խթանմանը
- բարելավել դասի անցկացման մեթոդները
- ժամանակին համակարգել ուսուցման և դաստիարակության արդյունքները
- պլանավորել և համակարգել սեփական աշխատանքը
- օգտագործել այն որպես ինքնակրթության միջոց
- արագ և որակյալ պատրաստվել դասին:

SՆՏ-ի օգտագործումը բարելավում է կրթության որակը՝ գործունեության նորության, համակարգչի հետ աշխատելու հետաքրքրության պատճառով: Դասասենյակում SՆՏ-ի օգտագործումը զգալիորեն մեծացնում է դրա արդյունավետությունը, արագացնում է դասին պատրաստվելու գործընթացը, ուսուցչին թույլ է տալիս լիովին ցուցադրել իր ստեղծագործությունը, ապահովում է տեսանելիություն, գրավում է մեծ թվով նյութի, 2 անգամ ավելացնում է դասում կատարված աշխատանքների ծավալը:

Մուլտիմեդիա համակարգերը հնարավորություն են տալիս հնարավորինս հարմարավետ

և տեսողական դարձնել դիդակտիկ նյութի ներկայացումը, որը խթանում է ուսման նկատմամբ հետաքրքրությունը և թույլ է տալիս վերացնել գիտելիքների բացերը: Դասարանում համակարգչային տեխնոլոգիաների օգտագործման հիմնական ուղղություններն են՝

Տեսողական տեղեկատվություն (նկարազարդող, տեսողական նյութ):

Ցուցադրման նյութ (վարժություններ, տեղեկատու դիագրամներ, աղյուսակներ, հասկացություններ):

Ուսուցման հմտությունների վերահսկում:

Ժամանակակից անհատական համակարգիչներն ու ծրագրերը թույլ են տալիս օգտագործել անիմացիա, ձայն, լուսանկարչական ճշգրտություն տարբեր վերապատրաստման միջոցներ մոդելավորելու հնարավորություն, հնարավորություն կունենան ներկայացնել եզակի տեղեկատվական նյութերի (նկարներ, ձեռագրեր, տեսանյութեր) մուլտիմեդիա ձևով: Ուսումնասիրված երևույթների, գործընթացների եւ փոխհարաբերությունների արտացոլում: Դասարանում համընդհանուր ձևավորման օգտագործումը միտված է ներառական գործընթացի բարելավմանը: Դասարաններում տարբեր ունակությունների տեր սովորողների ներկայությունը և դասապրոցեսը կազմակերպում են այնպես, որպեսզի ներգրավեն բոլոր սովորողներին, ՈւՄՀ-ն կատարելագործվում է: Գոյություն ունեն դասավանդման ամենատարբեր մոտեցումներ, որոնք ուսուցիչների կողմից կարող են օգտագործվել դասարանում համընդհանուր ձևավորման խթանման համար: Այս մոտեցումներից մեկն է համարվում տարբերակված ուսուցումը: Այս ընդգրկուն հայեցակարգը ուսուցիչներին հնարավորություն է տալիս առանձին թեմաներ դասավանդելիս, մարտահրավերը հարմարեցնել սովորողների անհատական առանձնահատկություններին:

Այսպիսով՝ ըստ նշված հետազոտությունների ՏՀՏի օգտագործումը նպաստում է աշակերտների առավելագույնս ներգրավածությանը և զարգացվածությանը, բարձրացնում է ուսման մակարդակը : Իմ հետազոտական աշխատանքների համար ընտրեցի դասերի ընթացքում ՏՀՏի կիրառման մեխանիզմը:Ցուրաքանչյուր դասից առաջ պատրաստում եմ նյութեր ժամանակակից տեխնոլոգիաներով դասն անցկացնելու համար:Ամեն դասի համար մշակում էի նոր ռազմավարություն, որն օգնում էր դասի առավել արդյունավետ լինելուն,որի օգնությամբ աշակերտներին մոտիվացիան

բարձրանում է և հետաքրքրություն է առաջանում առարկայի նկատմամբ: Կարևոր է նաև այն փաստը, որ բոլոր աշակերտներն են ներգրավվում դասապրոցեսին:

7. ՏՀՏ-ն դարձել է հանրակրթության բաղկացուցիչ մաս:

Մենք՝ ուսուցիչներս, դասարան մտնելիս պետք է քաջ գիտակցենք, որ հանրակրթության նպատակը ոչ միայն գիտելիք փոխանցելն է, այլև գիտակից քաղաքացի ձևավորելն է, ով կկարողանա կողմնորոշվել ժամանակակից աշխարհում: Զարգացած երկրները վաղուց են համոզվել, որ առանց կրթության մեջ հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառության այսօր գրեթե անհնար է հասնել այդ նպատակներին:

Վերլուծությունը պատասխանում է մեկ հիմնական հարցի՝ որքանով են տեխնոլոգիաները կիրառվում հանրակրթության մեջ և նպաստում կրթության որակի բարձրացմանը:

Մարդուն տեղեկատվական աշխարհում ապրել սովորեցնելը ժամանակակից դպրոցի ամենակարևոր խնդիրն է: Նոր գիտելիքների անհրաժեշտությունը, տեղեկատվական գրագիտությունը, գիտելիք ինքնուրույն ձեռք բերելու կարողությունը նպաստեցին կրթության նոր տեսակի առաջացմանը՝ նորարարական, որում տեղեկատվական տեխնոլոգիաները կոչված են խաղալու ողնաշար, ինտեգրող դեր:

Ժամանակակից հաղորդակցական տեխնոլոգիական միջոցները դասավանդողի ու սովորողի հարաբերությունները դարձնում են օպերատիվ, արդյունավետ ու մատչելի: Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ էլեկտրոնային ուսուցման համակարգերը, որոնք կառուցված են մուլտիմեդիական տեխնոլոգիաների հիման վրա, ներկայումս ուսուցման առավել արդյունավետ միջոցներից են: Հատկապես այս պարագայում է լիարժեքորեն իրականանում դասավանդման մեթոդիկայի հին, բայց ժամանակով ստուգված սկզբունքը՝ լավ է մեկ անգամ տեսնել, քան տասն անգամ լսել:

Համակարգչային գրաֆիկայի, անիմացիայի, կենդանի տեսապատկերման, ձայնի համակցված օգտագործումը եզակի հնարավորություն է ընձեռում ուսումնասիրվող նյութն առավելագույնս ընկալելու դիտողական տեսքով, ավելի հասկանալի ու հիշելի: Դա

հատկապես կարևոր է այն դեպքում, երբ սովորողը պետք է յուրացնի մեծ ծավալի տեղեկատվություն:

Իսկ ինչպե՞ս կարող է տեխնոլոգիան բարձրացնել ուսման որակը: Տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը որակապես փոխում է դասավանդողի դերը, և նա դառնում է սովորողի կրթական գործը կազմակերպող, նրան աջակցող ու գնահատող գործընկեր: Դասարաններում տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաները կիրառում են ուսումնական նյութն ավելի գրավիչ և հասկանալի ներկայացնելու համար: Ուստի ելնելով ժամանակակից դպրոցի պահանջներից՝ անհրաժեշտ է ավելացնել համակարգչի օգտագործմամբ ուսուցանումը: Օգտագործելով համակարգչի երկխոսական, մոդելավորման, գունային և բացառիկ այլ հնարավորությունները՝ դասը կարելի է դարձնել ավելի մատչելի, ընկալելի, դիտողական և նույնիսկ «հրավիրող»: Համակարգիչը կարող է օգնել դասավանդողին ուսուցման գործընթացը բովանդակալից ու հետաքրքիր անցկացնելու համար:

Տարրական դպրոցում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը միջոց է դպրոցականների ճանաչողական հետաքրքրությունը բարձրացնելու ուսումնական գործունեության նկատմամբ: Տեղեկատվական տեխնոլոգիան մեթոդների, արտադրական գործընթացների և ծրագրային ու ապարատային գործիքների մի շարք է՝ համակցված տեխնոլոգիական շղթայում, որն ապահովում է տեղեկատվության հավաքագրում, մշակում, պահպանում, բաշխում և ցուցադրում՝ տեղեկատվական ռեսուրսի օգտագործման գործընթացների բարդությունը նվազեցնելու համար. ինչպես նաև բարձրացնել դրանց հուսալիությունը և արդյունավետությունը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը թույլ է տալիս.

1. Ուսուցման բացատրական-պատկերազարդ եղանակից անցնել գործունեության վրա հիմնված ձևի, որտեղ երեխան դառնում է ուսումնական գործունեության ակտիվ սուբյեկտ: Սա նպաստում է սովորողների կողմից գիտելիքների գիտակցված յուրացմանը:
2. Ակտիվացնել ուսանողների ճանաչողական գործունեությունը:
3. Դասերն անցկացնել բարձր գեղագիտական և զգացմունքային մակարդակով:
4. Մեծացնել դասում կատարված աշխատանքի ծավալը:

5. Բարելավել գիտելիքների վերահսկումը:

6. Ռացիոնալ կազմակերպել ուսումնական գործընթացը, բարձրացնել դասի արդյունավետությունը:

7. Ձևավորել հետազոտական հմտություններ:

8. Ապահովել մուտք դեպի տարբեր տեղեկատու համակարգեր, էլեկտրոնային գրադարաններ, այլ տեղեկատվական ռեսուրսներ: Կրտսեր դպրոցում կրթության և դաստիարակության արդյունքներից մեկը պետք է լինի ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաներին տիրապետելու երեխաների պատրաստակամությունը և նրանց օգնությամբ ստացված տեղեկատվությունը հետագա ինքնակրթության համար օգտագործելու կարողությունը:

Համակարգիչը ակտիվացնում է սովորողների ուշադրությունը, ուժեղացնում նրանց մոտիվացիան, զարգացնում է ճանաչողական գործընթացները, մտածողությունը, ուշադրությունը, զարգացնում է երևակայությունը: Տարրական դպրոցում դասերի համար ուսումնական նյութի պատրաստման և ներկայացման ամենահաջող ձևերից մեկը կարելի է անվանել մուլտիմեդիա շնորհանդեսների ստեղծումը, որոնք համակարգչային ծրագրերի միջոցով տեղեկատվության ներկայացման հարմար և արդյունավետ միջոց են: Այն համատեղում է դինամիկան, ձայնը և պատկերը, այսինքն. այն գործոնները, որոնք ամենաերկար ժամանակով են գրավում երեխայի ուշադրությունը: Ընկալման երկու կարևոր օրգանների (լսողության և տեսողության) վրա միաժամանակ ազդելը կարող է մեծացնել ուսումնառության արդյունքները: Այն կարելի է օգտագործել դասի բոլոր փուլերում. և՛ գիտելիքի վերհանման, և՛ նոր նյութ բացատրելու, և՛ համախմբման ժամանակ: Համակարգչի հարուստ գրաֆիկական, ձայնային և ինտերակտիվ հնարավորությունների օգտագործումը դասասենյակում ստեղծում է բարենպաստ հուզական ֆոն՝ նպաստելով աշակերտի զարգացմանը, ասես նրա կողմից աննկատ, առանց ջանքերի:

SՀS գործիքների կիրառման ժամանակ ուսումնական գործընթացի օպտիմալացման ուղիների գործնական իրականացման հնարավորությունները.

- կրթական և զարգացման խնդիրների համապարփակ լուծում,
- յուրաքանչյուր աշակերտի կոնկրետ առաջադրանքների առաջադրում՝ կախված նրա կարողություններից, մոտիվացիայից, պատրաստվածության մակարդակից,
- կրթական նպատակներով տարբեր տեսակի էլեկտրոնային միջոցների օգտագործումը, ակտիվացնելով կրթական գործունեությունը,
- ուսուցչի մասնակի ազատում՝ տեղեկատվություն փոխանցողի, սովորեցնողի, վերահսկողի գործառույթներից,
- ուսանողների գիտելիքների ինքնատիրապետման հմտությունների ձևավորում, □ համացանցում տեղեկատվություն փնտրելու, հավաքելու և մշակելու հմտությունների զարգացում,
- ուսուցման դրական մոտիվացիայի խթանում, տեսանելիության բոլոր ձևերի ինտեգրման, կրթական գործունեության իրականացման անմիջական հետադարձ կապի և զարգացած օգնության համակարգի միջոցով: Օգտվում եմ պատրաստի էլեկտրոնային ռեսուրսներից, կազմում առանձին թեմաներով թեստային առաջադրանքներ, կարճ ասած՝ սովորեցնում երեխաներին օգտագործել SՀS-ն՝ սովորել սովորելու համար: Եվ կարող եմ սեփական փորձառությամբ փաստել, որ էլեկտրոնային ուսուցման միջոցների օգտագործումը թույլ է տալիս բարելավել ուսուցման որակը, դարձնել այն դինամիկ, լուծել մի քանի խնդիրներ՝ տեսանելիություն, մատչելիություն, անհատականություն, վերահսկողություն, անկախություն: Դասերի ընթացքում ավելի մեծ արդյունավետության համար կարելի է կիրառել առարկայական հավաքածուներ, դիմանկարներ, տեսաշրջագայություններ, ինտերակտիվ մոդելներ, լուսանկարներ, առարկաների նկարագրողումներ (հիմնականում դրանք հանրագիտարաններ են, որոնք շատ օգտակար են դասին պատրաստվելու համար): Նոր նյութ բացատրելիս մեկնաբանվում է էկրանին հայտնված տեղեկատվությունը, անհրաժեշտության դեպքում այն ուղեկցում լրացուցիչ բացատրություններով ու օրինակներով:

Համակարգչի շնորհիվ ավելի կարճ ժամանակում հնարավոր է լուծել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են բառապաշարի համալրումը, քերականական կառուցվածքի ձևավորումը, խոսքի ձայնային կողմի զարգացման մեջ բացերի լրացումը, համահունչ խոսքի ձևավորումը, ուղղագրության զարգացումը, զգոնությունը, որը նպաստում է գրագիտությանը: Սովորողների մոտ մեծանում է հետաքրքրությունը ուսումնական գործընթացի նկատմամբ, զարգացնում է ինքնատիրապետման և ինքնուրույն գործունեության հմտությունը: Էլեկտրոնային հանրագիտարանի անիմացիոն կամ վիդեո պատմությունը ոչ միայն ընդլայնում է ներկայացված տեղեկատվության շրջանակը, այլև ակտիվացնում է դպրոցականների ուշադրությունը տեսողական և լսողական վերլուծիչների ակտիվ աշխատանքի շնորհիվ: Համակարգիչը ձևավորում է նյութը ռացիոնալ մտապահելու հմտություններ: Սովորողների համար դժվար նյութը ավելի հեշտ է հիշել գծապատկերների և աղյուսակների օգնությամբ, որոնք հակիրճ և հստակ ցույց են տալիս ուսումնասիրվող նյութը: Ժամանակակից տեխնոլոգիաների և դասավանդման օպտիմալ մեթոդների շնորհիվ ուսուցիչը յուրաքանչյուր երեխայի հնարավորություն է տալիս «ճամփորդել» գիտելիքի աշխարհով, կարծես թե նա ճանապարհորդում է ինչ-որ զվարճալի խաղի խաղային տեսարաններով, ինչը նոր հզոր խթան է հաղորդում ինքնուրույնության զարգացմանը:

Կրթական գործընթացում համակարգիչը կարելի է օգտագործել՝ որպես ուսումնական նյութի յուրացման նկատմամբ հսկողություն կազմակերպելու, սովորողների հաջողության ակնթարթային գնահատման և դասի ընթացքում սովորողների ունեցած դժվարությունների մասին տեղեկատվություն ստանալու միջոց: Դպրոցականների տեղեկատվական կարողունակությունն անհրաժեշտ է բոլոր ուսումնական առարկաների որակական զարգացման համար:

Ի դեպ, համակարգչային տեխնիկան հնարավոր է օգտագործել ոչ միայն դասարանում: Երեխաներին առաջին հերթին գրավում է համակարգչով աշխատելու գործընթացը. հարց է տալիս ոչ թե դասագիրքը, այլ ինքը՝ սովորողը, ճշգրիտ ձևակերպելով խնդրանքը, սարքին խնդրում է տրամադրել անհրաժեշտ տեղեկատվությունը, այսինքն, կա՝ երեխայի միջնորդավորված հաղորդակցություն համացանցի հետ: Այսպես սովորողը հասկանում է իր կարևորությունը՝ որպես նախաձեռնող, կազմակերպիչ, գրաքննիչ, մի խոսքով այս հաղորդակցության ակտիվ կողմ: Երեխան զգում է իր կարևորությունն ու

պատասխանատվությունը, ինչը չի կարող դրականորեն չազդել նրա

ինքնագնահատականի վրա:

Միևնույն ժամանակ, ինչպես ցույց է տալիս դասավանդման փորձը, համակարգչային տեսաֆիլմեր դիտելիս սովորողների մոտ ավելանում է «ինչու»-ների քանակը, ինչն էլ ստիպում է նրանց համացանցում ինքնուրույն փնտրելու և գտնելու իրենց հուզող հարցերի պատասխանները:

Տեղեկատվական մշակույթի ձևավորումը դպրոցում տեղի է ունենում հիմնականում ՏՀՏ-ի օգնությամբ և միջոցներով, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, ժամանակակից դպրոցն առանց տեղեկատվական նոր տեխնոլոգիաների արդեն անհնար է պատկերացնել:

ՏՀՏ-ի օգտագործումը դասարանում ուժեղացնում է.

1. հավասարության սկզբունքը
2. վստահության սկզբունքը
3. հետադարձ կապի սկզբունքը
4. հետազոտողի պաշտոն ստանձնելու սկզբունքը.
5. Ինքնուրույնությունը

Համակարգչային տեխնոլոգիաները, կրթական պաշարները, էլեկտրոնային ուսուցումը և տեղեկատվական կայքերն արդյունավետ չեն լինի, եթե նրանց կիրառումը կրի անջատ և ոչ նպատակամղված բնույթ: Դպրոցում կիրառելի գործիքներից կուզելի առանցնացնել հետևյալները.

- Google Slides-ն էլեկտրոնային ցուցադրության ընտիր գործիք է, որով կարելի է ստեղծել ու ներկայացնել ազդեցիկ շնորհանդեսներ:
- AnswerGarden գործիքը, որը մտքերի տարափ կամ մտազրոհ մեթոդի համար կարելի է կիրառել:
- Tricider-ն առցանց գործիքը է մտազրոհ կազմակերպելու, գաղափարներ հավաքագրելու, քննարկումներ և քվեարկություն կազմակերպելու համար:
- Book Creator-ը էլեկտրոնային գիրք ստեղծելու համար նախատեսված գործիք է:
- ԻմԴպրոց կրթական կայքն օգնում է սովորողներին լրացուցիչ առաջադրանքների օգնությամբ ամրապնդել դպրոցական գիտելիքներն ու զարգացնել կարողությունները:

- Google Forms գործիքի միջոցով իրականացվում է միավորային գնահատում (տեսական և գործնական):
- Google Classroom-ը ուսուցողական հավաքածու է դպրոցների համար, որոնք կարող են ավելացվել Google Apps-ի կրթական ծրագրերից օգտվողների համար: Google-ը տրամադրում է Google Apps-ի անվճար խմբագրությունը ուսումնական հաստատությունների համար, եւ Google Classroom-ն այն տեղադրումն է, որը տեղադրում է Google-ի ծրագրերը ուսանողներին և ուսուցիչներին հաղորդակցման հավաքակազմ դարձնելու միջոցով: Այն շատ արդյունավետ կձառայի իր բուն նպատակին մանավանդ հեռավար դասերի պարագայում:
- Padlet-ն առցանց գործիք է, առցանց գրատախտակի սահիկաշար, որը հանդիսանում է համագործակցային աշխատանքի տիրույթ:
- Play Posit-ը կիրառելի է որպես հեռավար դասընթացի կիրառման միջոց, այն հարթակ է, որտեղ կարելի է ներբեռնել վիդեոն և պատրաստել հարցաշար տվյալ նյութի շուրջ:
- Renderforest-ն անիմացիոն տեսանյութ պատրաստելու գործիք է: Կայքում առկա թեմաների ընտրությամբ հնարավոր է ստանալ բազմաբնույթ տեսահոլովակներ, վերջում ընտրել ձևավորում և երաժշտություն տեսաշարի համար:
- Wordwall դասընթացը ավելի հետաքրքիր դարձնելու համար կարելի է այս գործիքով կազմել և կիրառել՝ հետաքրքրաշարժ, ինքնատիպ և անհատական առաջադրանքներ:
- Socrative-ը թեստեր ստեղծելու, որոնելու և տարածելու, ինչպես նաև թեստեր անցկացնելու գործիք է: Առավելություններից հարկ է նշել զարգացման հեշտությունը և հաճելի տեսքը:
- Quizizz-ը ուսանողների գնահատման հետաքրքրաշարժ, ինտերակտիվ առցանց գործիք է:
- Quizlet-ը անվճար ծառայություն է, որը հեշտացնում է ցանկացած տեղեկատվություն մտապահելու գործընթացը, որը ներկայացվում է ուսումնական քարտերի տեսքով: Պահանջվում է միայն գտնել տվյալների բազայում կամ ստեղծել ինտերակտիվ նյութ՝ ձեր սեփական քարտերը, դրանցում ավելացնել նկարներ և

աուդիո ֆայլեր, այնուհետև վարժություններ կատարել և խաղեր խաղալ՝ նյութը անգիր հիշելու համար:

- LearningApps-ը լիովին անվճար առցանց ծառայություն է, որը թույլ է տալիս ստեղծել ինտերակտիվ վարժություններ՝ ստուգելու ձեր գիտելիքները:
- Storyjumper-ը առցանց ռեսուրս-գործիք է, որը կարելի է օգտագործել տարբեր եղանակներով: Այս հրաշք գործիքը հնարավորություն է տալիս ստեղծել պատմություններ, բառարաններ՝ գրքի տեսքով: Այն ուսուցման նոր հնարավորությունների անվճար ծառայություն է, որը գործում է վեբ ռեժիմով: Ժամանակակից վեբ ծառայությունները մեծ հնարավորություններ են տալիս սովորողների համատեղ (հավաքական) աշխատանքի համար՝ ինչպես դպրոցում, այնպես էլ դպրոցի պատերից դուրս: Այս ծառայություններից մեկը Storyjumper-ն է, որը թույլ է տալիս ստեղծել առցանց գիրք՝ անհրաժեշտ գրառմամբ, նկարներով (լուսանկարներով), ձայնագրությամբ և դրանք կիսել:

Եզրակացություն

Մեր անձնական, գործնական, սոցիալական և մշակութային կյանքը ենթարկվում է փոփոխությունների տեխնոլոգիաների հեղափոխության հետևանքով: Տարբեր ոլորտներում կարելի է տեսնել ու ուսումնասիրել տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունները, դրանց բերած փոփոխությունները: :

Տեղեկատվական տեխնոլոգիաների իմացությունը ժամանակակից աշխարհում դասվում է այնպիսի որակների կողքին, ինչպիսիք են՝ կարդալու և գրելու կարողությունը: Տեխնոլոգիաներին և տեղեկատվությանը հմտորեն և արդյունավետ տիրապետող մարդն ունի այլ, նոր մտածելակերպ, սկզբունքորեն այլ մոտեցում՝ առաջացած խնդիրը գնահատելու, իր գործունեությունը կազմակերպելու հարցում: Սովորողները կարիք ունեն ստեղծելու այնպիսի օգտակար հետազոտական աշխատանքներ, որոնք կարևոր արժեք կունենան նաև ուսումնական հաստատությունից դուրս: Տեխնոլոգիաների վրա հիմնված մեթոդները կարող են օգնել դասավանդողին՝ հնարավորություն տալով նրան խնայելու ժամանակը և ջանքերը ներդնելու այն կարևոր գործում, որը պահանջում է մարդկանց միջև

փոխներգործություն ուսումնական միջավայրի մշտական գնահատման ու բարելավման համար:

Ուսումնական մոտիվացիան աշակերտների ուսումնական գործունեության կարևորագույն բաղադրամասն է և այն հիմնական գործոնը, որը խթանում է աշակերտին և նրան մղում որոշակի արարքների, վարքի ձևերի և գործունեության: Աշակերտի կատարածի մոտիվների իմացությունն ուսուցչին հնարավորություն է տալիս բացահայտել աշակերտի գործունեության յուրահատկություններն ու նպատակները, ինչպես նաև նրա կատարած առանձին արարքների պատճառները: Ուսուցման մոտիվացիան բարձրացնելու նպատակով որոշեցի դասապրոցեսին կիրառել ժամանակակից տեխնոլոգիաներ: Գործնական համատեքստում փորձերը կատարել եմ երեք դասարանում, որտեղ սովորում են տարբեր կարողություններով օժտված երեխաներ: Փորձարարական դասերի ընթացքում կիրառելով տեղեկատվական տեխնոլոգիաներ և տարբեր ռազմավարություններ՝ կարողացա ապահովել երեխաների ներգրավածությունը՝ միժամանակ լուծելով մոտիվացիայի հարցը, որը առաջնային է ուսուցման գործընթացում: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը արդյունավետ էր նաև տարբերակված ուսուցման ժամանակ: Մեծ էր երեխաների ոգևորվածությունը հատկապես, երբ առցանց գործիքների միջոցով կատարվում էր հարցադրում և գնահատում: Այսպիսով եկա այն եզրահանգման, որ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը բարձրացնում է ուսուցման մակարդակը, ինչպես նաև հետաքրքրություն առաջացնում երեխաների մոտ ինքնուրույն լրացուցիչ տեղեկատվություն հավաքելու, մշակելու և մշակածը գիտելիք դարձնելու մեջ: Եկե՛ք եզրակացնենք նաև, որ ՏՀՏ-ների ինտեգրումը ուսումնական գործընթացին անխուսափելի է, և դրական նշանակությունն էլ՝ ակնհայտ: Այսպիսով՝ կրթական գործունեության մեջ փոխվում է շեշտադրումը՝ ուսուցչակենտրոնից դեպի անձնակենտրոն և դաս ավանդումից դեպի սովորողի ինքնուրույն ճանաչողական գործունեություն: Ժամանակակից տեխնոլոգիաների դարում ուսուցման գործընթացում սովորողների կողմից կրթական տեխնոլոգիայի հիմնական տարրերը լիովին կիրառելու համար անհրաժեշտ է, որ դասավանդողները տիրապետեն համակարգչային գրագիտությանը և այն ուսուցանեն նաև սովորողներին:

Ուսուցչի գերխնդիրն է. Ամեն ինչ պետք է անել գիտակից, առողջ վարք ու բարք ունեցող, ժամանակների մարտահրավերներին դիմակայող սերունդ ունենալու համար...

Գրականություն

«Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիայի կիրառումը հանրակրթական դպրոցում» ուսուցչի ձեռնարկ /հր.2004/

«Համակարգչային մտածելակերպ» հեղինակներ՝ Ռ. Թովիչյան, Ա. Մելքոնյան/

«Մեդիակրթությունը ժամանակակից աշխարհում» Վ. Օսպեննիկովա

«ՏՀՏ կիրառումը դասավանդման մեջ» Ալբերտ Նալչաջյան,

<https://www.imdproc.am/>

<https://ueict.org/project/high-school-programs/>

<https://lib.armedu.am/>

<https://lib.armedu.am/article/5638>

<https://www.course.am/ru/courses/-krtaran-virtual-dprotc/tht-gortsikneri-kirarumy-owsowmnakan-gortsyntatcowm/SRWW5JQRZ/>